ԱՇՈՏ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

# «ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ» ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ 1930 – 1948 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Մինչև Թուրքիայի Հանրապետության կազմավորումը, երբ 1923թ. հունվարի 6–ին Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքն արդեն գոյություն ունեցող մի շարք ընկերությունների հիմքի վրա հրապարակեց Ժողովրդական կուսակցության (ԺԿ) ստեղծման մասին հռչակագիր, այնուհետև ապրիլի 8–ին հրապարակվեցին կուսակցության նախնական ծրագրային դրույթներ համարվող «Ինը սկզբունքները»[1]: Խոսելով ԺԿ–ի առաքելության մասին՝ Քեմալը նշում էր, որ Ժողովրդական կուսակցությունը պարտավորվում է ստանձնել Թուրքիան ժամանակակից աշխարհի մեջ մտցնելու և այնտեղ նրա վերելքն ապահովելու գործունեությունը[2]: 1924 թվականից Ժողովրդական կուսակցությունը վերանվանվում է Ժողովրդահանրապետական կուսակցություն (ԺՀԿ): Կուսակցության կարևոր նպատակներից էր կազմավորել կուսակցական կառույցները և ապարատը, կենտրոնացնել պետական և կուսակցական իշխանությունը, մշակել գաղափարախոսությունը, հաստատել կուսակցության գերակայությունը պետական քաղաքականության մեջ և խստացնել միակուսակցական վարչակարգը:

Թուրքիայի Հանրապետության և ԺՀԿ–ի կազմավորման ընթացքում Մուսթաֆա Քեմալի նախաձեռնությամբ ստեղծվեց «Թուրքական պատմական հանձնախումբ», որի նպատակն էր լուսաբանել Օսմանյան կայսրության պատմությունը: Մակայն այդ հանձնախմբի անարդյունավետ գործունեության հետևանքով ձևավորվեց մի նոր կազմակերպություն՝ «Թուրքական պատմական ընկերությունը», որի միջոցով փորձ էր արվում հանրությանը ներկայացնել թուրքական պատմության նոր հայեցակարգը:

Թուրքական իշխանությունների այս քայլը նպատակ էր հետապնդում երկրի ներսում և նրա սահմաններից դուրս ներկայացնել պատմական նոր «ուսումնասիրություններ», որոնց միջոցով կարող է ձևավորվել հասա-

---

* Աշոտ Սողոմոնյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի դասախոս է, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի հետազոտող:

բակական մի նոր կարծիք: Այսինքն՝ Թուրքիան, դեռևս այն ժամանակներից գիտակցելով, թե իրեն ինչպիսի ժառանգություն է բաժին հասել Օսմանյան ժամանակաշրջանից, փորձում է պաշտոնապես միջամտել և նորովի ներկայացնել պատմությունը և իրականությունը:

Թուրքական պատմական ընկերությունը ստեղծվել է Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի անմիջական նախաձեռնությամբ: 1930 թվականի ապրիլի 23–ին «Թուրքական օջախների» 6–րդ համագումարը դրեց Թուրքական պատմական ընկերության հիմնաքարը: Թուրքական պատմական ընկերության կազմավորմամբ «Թուրքական օջախների» կանոնադրության մեջ նշվում է. «Թուրքական օջախը Թուրքիայի պատմությունն ուսումնասիրող հանձնախումբ է»: Հանձնախումբը բաղկացած էր 16 անդամից, և նրա առաջին հավաքը տեղի է ունեցել 1930 թվականի հունիսի 4–ին թուրք օջախների կենտրոնական մասնաշենքում, որտեղ նախագահ Համդուլահ Սուպհիի գլխավորությամբ ընտրվում է ղեկավար մարմինը հետևյալ կազմով՝ նախագահ՝ Հանրապետության նախագահի գլխավոր քարտուղար Մեհմեդ Թևֆիք (Բյուլբյուլօղլու), փոխնախագահ՝ Իրավաբանական ֆակուլտետի քաղաքական պատմության պրոֆեսոր և Ստամբուլի պատգամավոր Յուսուֆ Աքչուրա, փոխնախագահ՝ Չանաքքալեի պատգամավոր Սամիհ Ռիֆաթ, գլխավոր քարտուղար՝ Այդընի պատգամավոր, դոկտոր Ռեշիթ Գալիփ[3]:

1931թ–ին փակվում են «Թուրքական օջախները», և վերոհիշյալ թուրք պատմության ուսումնասիրման հանձնախումբը այլևս չէր գործում: Լեզվական բարեփոխումներից հետո կազմակերպությունը 1935–ին Աթաթյուրքի կողմից վերանվանվում է «Թուրքական պատմական ընկերություն»:

Նախարարների խորհրդի 21.X.1940թ–ի 2/ 14556 համարի հրամանում (ընդհանուրի) հանրության օգտին ծառայող օրենքներում Թուրքական պատմական ընկերության վերաբերյալ ասվում է հետևյալը. «Թուրքական պատմության ուսումնասիրությունները և ստացված արդյունքները հրատարակելու նպատակով ստեղծված է Թուրքական պատմական ընկերությունը, որի գիտական աշխատությունները արժանացել են աշխարհի գիտական հանրության հավանությանը: Կազմակերպությունների մասին օրենքի 37–րդ կետի համաձայն՝ համընդհանուր հետաքրքրություն ներկայացնող կազմակերպությունների վերաբերյալ Պետական երկրորդ հիմնարկությունն և համընդհանուր կազմակերպության կողմից 25.07.1940թ, 12. 09.1940թ թիվ 2471/ 2522, 300/3003 որոշման հիման վրա ներկայացված արձանագրությունը վերոնշյալ կազմակերպության վերաբերյալ 21.10.1940թ–ին արժանանում է նախարարների խորհրդի համաձայնությանը»[4]:

1932թ. փետրվարի 14–ին Աթաթյուրքը կազմակերպեց դասընթաց պատմության ուսուցիչներին նոր պատմության տեսակետին ծանոթաց-

նելու նպատակով: Այդ դասընթացը պետք է կոչվեր «Պատմության ուսուցիչների դասընթաց», սակայն առաջին հավաքույթից հետո այն կոչվեց «Թուրքական պատմական առաջին կոնգրես» և բոլոր արձանագրությունները հրատարակվեցին այս անվանումով:

Կոնգրեսը կազմակերպվել էր Ազգային կրթության նախարարության հետ համատեղ, որին հրավիրված էին Ստամբուլի համալսարանի պատմագիտության պրոֆեսորներ, ինչպես նաև ուսումնարանների և միջնակարգ դպրոցների պատմության ուսուցիչներ: Կոնգրեսին մասնակցում էին 232 անդամ, որոնցից 25–ը՝ թուրքական պատմական ընկերության անդամներ, 10–ը՝ համալսարանի ներկայացուցիչներ, 1–ը գեղեցիկ արվեստների ակադեմիայի անդամ, 198–ը ուսումնարանների և միջնակագ դպրոցների ուսուցիչներ: Կոնգրեսի նախագահությունը կազմվեց հետևյալ կարգով. նախագահ՝ Ազգային կրթության նախարար Էսաթ–բեյ, փոխնախագահ՝ թուրքական պատմական ընկերության նախագահ և Անկարայի իրավագիտության ֆակուլտետի քաղաքական պատմության պրոֆեսոր Յուսուֆ Աքչուրա–բեյ, Ազգային կրթության նախարարության կրթության և դաստիարակության վարչության պետ՝ Իլհան (Սանգա)–բեյ[5]:

Կոնգրեսը բացվեց 1932թ. հուլիսի 2–ին Անկարայի ժողովրդական տան թատրոնի սրահում Ազգային կրթության նախարար Էսաթ–բեյի կողմից: Կոնգրեսի բոլոր նիստերին ուշադիր հետևում և հանձնարարություններ էր տալիս Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքը:

Թուրքական պատմական առաջին կոնգրեսին մասնակցում էին միայն թուրք պրոֆեսորներ և ուսուցիչներ: Սիջազգային որևէ ներկայացուցիչ կոնգրեսին չէր մասնակցում [6]:

Կոնգրեսի առաջին օրը օրակարգում կարևոր քննարկման առարկա էր հանդիսանում թուրքական պատմական ընկերության անդամ տիկին Աֆեթի «Պատմությունից առաջ և Պատմության լույսի ներքո» վերտառությամբ զեկուցումը: Երկրորդ օրը քննարկման էր ներկայացվել Թուրքական պատմական ընկերության քարտուղար, դոկտոր Ռեշիթ Գալիփի «Հայացք թուրքական ցեղի և մշակույթի պատմությանը» վերտառությանը զեկուցումը: Երրորդ օրը Ստամբուլի համալսարանի մարդաբանության ֆակուլտետի դեկանի տեղակալ Շևքեթ Ազիզի «Թուրքերի մարդաբանությունը» զեկուցումը: Վեցերորդ օրը թուրքական պատմական ուսումնասիրություն ընկերության նախագահ Յուսուֆ Աքչուրա Օղլուի առաջարկությամբ քննարկվել է «Պատմությունը գրելու և պատմությունը պարտադրել կարդալու մանրամասներին վերաբերող» գիտաժողով կազմակերպելու հարցը:

1932թ. փետրվարի 14–ին Աթաթյուրքի հրամաններում թուրքական պատմության առաջին կոնգրեսից բացի տեղ է գտել ևս 3 խնդիր.

1. «Թուրքիայի պատմության գլխավոր հիշողությունները» գիրքը վերջին ուսումնասիրությունների և փաստերի հիման վրա կրկին գրի առնել,

2. ուսումնասիրությունների համար պատրաստված 4 հատոր պատմության գրքերում անհրաժեշտ ուղղումներ կատարելուց հետո նոր հրատարակության հանձնել 1932–1933 ուսումնական տարվա համար,

3. նախակրթարանների համար պատրաստել նոր պատմության դասագրքեր:

Աթաթյուրքը ցանկանում էր, որ «Թուրքական պատմության գլխավոր հիշողությունները» գիրքը պատրաստ լինի մինչև 1932թ. աշնանը: 1932թ. հուլիսի 13–ից մինչև հոկտեմբերի 17–ը Անկարայում և Ստամբուլում տեղի ունեցած նստաշրջանների ընթացքում կայացվեց վերջնական որոշում, թե ովքեր պետք է գրեն աշխատությունները և այն երբ պետք է պատրաստ լինի: Ըստ այդմ, որոշվեց «պատմության» բաժինը հանձնարարել Թուրքական պատմական ընկերության անդամներին, իսկ «մշակույթի» բաժինը՝ առանձին մասնագետների:

Թուրքական պատմական ընկերության նպատակների մասին նշված է նրա կանոնադրության 4–րդ և 5–րդ կետերում.

«Կետ 4–րդ. Ընկերության նպատակն է ուսումնասիրել Թուրքիայի և թուրքական պատմության, ինչպես նաև դրա հետ կապված խնդիրները և արդյունքները հրապարակել ամեն գնով: Թարգմանել և հրատարակել են թուրքերին և Թուրքիայի պատմությանը վերաբերող օտարերկրացիների կողմից հրատարակված գիտական աշխատություններ, կազմակերպել ժողովներ և գիտաժողովներ գիտական խնդիրներին ուռնչվող հարցերը քննարկելու նպատակով:

Կետ 5–րդ. Ընկերությունը համագործակցելու է օտարերկրյա գիտական կազմակերպությունների, ուսումնասիրման և հրատարակչական կենտրոնների հետ:»

Ընկերությունը 1937թ–ից սկսած երեք ամիսը մեկ անգամ հրատարակել է «Belleten» կոչվող ամսագիր: «Belleten» վերնագիրը, որը նշանակում է «ուսումնասիրող», Աթաթյուրքի նվերն է ընկերությանը: «Belleten»–ը և համարվում է ընկերության օրգանը[8]:

Թուրքական պատմական 1–ին կոնգրեսից (2 հուլիսի, 1937թ.) հետո 1937թ–ի 20–25–ին Ստամբուլի Դոլմաբահչե պալատում գումարվեց թուրքական պատմական 2–րդ կոնգրեսը: Այս կոնգրեսին առաջին անգամ հրավիրվել են օտարերկրացի գիտնականներ[9]: Այստեղ ներկայացված բոլոր ուսումնասիրությունները Աթաթյուրքը կարդացել էր մեկ առ մեկ, այնուհետև թույլատրել էր դրանք ներկայացնել կոնգրեսում[10]:

Թուրքական պատմական 3–րդ կոնգրեսի աշխատանքները 2–րդ համաշխարհային պատերազմի պատճառով սկսվեցին ուշ: Այն տեղի է ունեցել 1943թ–ի նոյեմբերի 15–ից 20–ը Անկարայում:

Այդ ժամանակահատվածում կատարվել է Անատոլիայում մեծ պետության ստեղծման, խեթերի սփռման սահմանների ուսումնասիրու-

թյունը, հին Անատոլիայի մշակույթը և Միջին Ասիայի, Էգեյան ծովի ավազանի, հարավային Ռուսաստանի ե Արևելյան Եվրոպայի մշակույթների ուսումնասիրությունները, և վերջապես հազարավոր տարիներ ի վեր մեծ քաղաքակրթության բնակավայր հանդիսացող Անատոլիայի պատմությանը վերաբերող փաստաթղթերի հրապարակումը[11]:

Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն փասսի վրա, որ խոսելով արաբների, պարսիկների, իրաքցիների, սելջուկների, ռուսների, չինացիների մասին թուրքական պաշտոնական պատմագրության մեջ հատկապես Անատոլիայի, վերաբերյալ հրապարակումներում որևէ ակնարկ չի արվում հայերի՝ այդ տարածքներում գոյության մասին:

Թուրքական պատմական ընկերությունը ուսումնասիրել է արաբական, իրանական, սիրիական, վրացական, հունական և հայկական աղբյուրներ՝ վկայակոչելով միայն թուրքերին վերաբերող հատվածները: Հայկական աղբյուրներից են՝ վերջին ժամանակներին վերաբերող. 1. Թանբուրի Հարութինի «Թահմաս Քուլու խանի պատմությունը», 2. Գալուստ Արսբյանի «Ռուսչուք Այանը Մուսթաֆա փաշայի կյանքը և հերոսությունները» վերտառությամբ աշխատությունները: Ավելի հին շրջանի վերաբերող 1. Գենջելի Կիրակոսի «Մոնղոլական արշավանքի պատմությունը», 2. Մեզոփցի Թումսյի «Թիմուրի և Շահրուհի պատերազմները Արևմտյան Ասիայում, Աքքոյունլուները և Քարաքոյունլուները», 3. Սովսես Քազանքայթուաչըյի «Աֆղանների պատմություն» աշխատությունները, ինչպես նաև թուրքերեն թարգմանված 1. Ուրֆայի Մաթիհենի «Պատմությունը», 2. Թամիչյանի «Մեծ ժամանակագրություն», 3. Ռահիփ Գրիգորի, 4. Անիից (Անիում բնակվող) Սամվելի, 5. Ուրֆացի Վահրամի, 6. Կիլիկիացի Ներսեսի, 7. Կիլիկիացի Սմբատի, 8. Ռահիփ Մալաքի նման հայ պատմաբանների աշխատություններում գոյություն ունեն թուրքերին վերաբերող հատվածներ[12]:

Թուրքական պատմական ընկերությունը 1937–1943թթ–ին կատարել է հնագիտական ուսումնասիրություններ, ըստ որի՝ Արևելյան Անատոլիան ներկայացվում է հետևյալ ժամանակագրական առումներով.

Մեր թվարկությունից առաջ ընկած ժամանակահատվածը (հին քարի դար, միջին քարի դար, kolkolitik, պղնձի դար).

Խեթական դարաշրջան.

Թրակիայի դարաշրջան.

Հելլենական–հռոմեական դարաշրջան.

Բյուզանդական դարաշրջան.

Սելջուկյան դարաշրջան.

Օսմանյան դարաշրջան.

Անատոլիայում բնակված խեթերից մինչև օսմանյան ժամանակաշրջանին վերաբերող հրապարակումներում Թուրքական պատմական

ընկերությունն անդրադարձել է այդ տարածաշրջանում ապրող գրեթե բոլոր ժողովուրդներին, բացի հայերից[13]:

Այդուհանդերձ, «Քյորօղլուի» պատմությանն անդրադառնալիս ընկերության մասնագետներն օգտվել են կովկասյան, իրանական և հայկական աղբյուրներից: Որպես հայկական աղբյուր օգտագործվել է «Collection d' Historiens Armeniens» Թավրիզցի Առաքելի աշխատանքը:

Կարսի պատմությունն ուսումնասիրելիս ընկերությունը չի ակնարկում այնտեղ մեծամասնություն կազմող հայերի մասին, դեռ ավելին՝ նշելով Անիում կատարված պեղումների մասին, չի նշում այնտեղ գոյություն ունեցող որևէ հայկական եկեղեցու կամ հուշաքարի, ինչպես նաև չի նշվում այնտեղ ապրած հայերի մասին: Բացի այդ, Թուրքական պատմական ընկերությունն ուսումնասիրել և երրորդ կոնգրեսում ներկայացրած Սալաքիայի, Ուլուդաղի, Կարսի, Իգդիրի, Վանի և այլ շրջանների գյուղերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության մեջ ևս հայերի մասին ոչինչ չի նշվում: Դեռ ավելին՝ Թուրքական պաշտոնական պատմագրության մեջ Անատոլիայում մշակույթի և արվեստի տարածման հարցում խիստ կասկածի տակ է դրվում Բուլղար հնագետների և պատմաբանների այն պնդումները, որ այդ հարցում հսկայական է հայ արվեստագետների լումա[14]:

Թուրքական պատմագրության մեջ գիտակցաբար խեղաթյուրվում է իրականությունը Թուրքիայում գոյություն ունեցող հին կառույցների ճարտարապետների հարցում: Այդ կապակցությամբ նշվում է. «Օտարերկրացիներ կան, որոնք նշում են, թե իբր Թուրքիայում գոյություն ունեցող կառույցների մեծ մասը կառուցել են հույն, հայ, արաբ և պարսիկ ճարտարապետները»[15]:

Թուրքական պատմական չորրորդ կոնգրեսը տեղի է ունեցել 1948 թվականի նոյեմբերի 10–ից 14–ը Անկարայում: Ինչպես ընկերության աշխատանքներին, այնպես էլ կոնգրեսի կազմակերպմանը հետևում էին Հանրապետության այն ժամանակվա նախագահ Իսմեթ Ինոնյուն, վարչապետ Հ. Սաքաև, ԹՄԱԺ–ի նախագահ Շ. Մարաջօղլուն, նախարարները և Գլխավոր շտաբի պետ Ս. Օմուրթաքը[16]:

Թուրքական պատմական չորրորդ կոնգրեսին ի թիվս այլ նյութերի ներկայացվել է ուսումնասիրություն՝ «Օսմանյան ղեկավարությունը և վրացիները» թեմայով: Այն հետագայում հրապարակվել է ընկերության պաշտոնական տեղեկագրում: Թուրք պատմաբաններին անհանգստություն է պատճառել վրացի երկու պատմաբանների կողմից ներկայացված «վրացական հարցը», որի արդյունքում էլ ուսումնասիրվել են Մահմուդ Երկրորդի ժամանակաշրջանին վերաբերող փաստաթղթերը[17]: Վրացի պատմաբանները նշում են, որ թուրքերը ամենամեծ վատությունները են կատարել, ամենամեծ դաժանությունները են գործել վրացիների

նկատմամբ, վրացիներին պարտադրել են մոռանալ իրենց կրոնը և ընդունել իսլամ: Այդ պատճառով էլ վրացի ժողովուրդը, միավորվելով ռուսների հետ, պատերազմել է օսմանցիների դեմ[18]:

Հետաքրքրական է, որ ընկերությունը պաշտոնական պատմագրության մեջ ազատ անդրադարձել է «վրացական հարցին», վստահ լինելով, որ նման վտանգ Թուրքիային չի սպառնում: Անդրադառնալով «վրացական հարցին»՝ ընկերության պատմաբանները չեն անդրադարձել իրենց քաջ հայտնի «հայկական հարցին»՝ բնականաբար գիտակցելով դրա խիստ վտանգավոր հետևանքները: Կարևոր է այն փաստը, որ ստեղծվելով 1930 թվականին, Թուրքական պատմական ընկերությունն իր հրապարակումներում Հայկական հարցին անդրադարձել է միայն 1950–ական թվականներից, այսինքն՝ երկարատև մտորումներից հետո միայն:

## ՕԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


1. Рустамов Ю., Современная турецкая буржуазная социология. Баку, Изд. АН Азерб. ССР, 1967, с. 153.
2. Atatürkün Söylev ve Demeçleri, c. 2, Ankara, 1959, s. 189
3. Iğdemir U. "Cumhuriyetin 50 yılında Türk Tarih Kurumu" – Türk Tarih Kurumu Basımevi, Ankara 1973, s. 4, ss. 158
4. Տե՛ս նույն տեղում, էջ 7:
5. Տե՛ս նույն տեղում, էջ 11:
6. Տե՛ս նույն տեղում, էջ 13 :
7. Տե՛ս նույն տեղում, էջ 37:
8. Iğdemir U. Atatürk ve Belleten, Belleten 3–2nci / 10(1939) 355 – 356, lev. XCIX.
9. Տե՛ս նույն տեղում, էջ 41:
10. Iğdemir U. "Cumhuriyetin 50 Yılında Türk Tarih Kurumu", Türk Tarih Kurumu Basımevi, Ankara 1973, s. 41, ss. 158.
11. Տե՛ս նույն տեղում, էջ 15:
12. Տե՛ս նույն տեղում, էջ 20:
13. Տե՛ս նույն տեղում, էջ 14 – 46:
14. Տե՛ս նույն տեղում, էջ 621:
15. Տե՛ս նույն տեղում, էջ 697:
16. IV Türk Tarih Kongresi, Türk Tarih Kurumu Basimevi, Ankara 1952, s. XI, ss. 518.
17. Տե՛ս նույն տեղում, էջ 317:
18. Տե՛ս նույն տեղում, էջ 318: